

Եօթանասուն երկու անձեր երկվ երկկոյնան Կոհ գացին Թուրքիոյ մէջ, երբ «Թուրքիզ Էրլայն»-ի մէկ ճամբորդատարը ջախջախուեցաւ եւ հրոյ ճարակ դարձաւ Տիարպէթիի օդակայանին մէջ: Արկածէն փրկուեցան հինգ ճամբորդներ, որոնցմէ կին մը պատմեց, թէ օդանաւը էջքի պահուն երկուրքի բաժնուած եւ կրակ տած է: Ան «թռչած» է իր աթոռէն եւ ինկած յարդերու դէպի մը վրայ էջուղիին մօտակայ դաշտի մը մէջ:

(ԱՅՓ)

### ՊԵՏՈՒԹԻՒՆԸ ՊԻՏԻ ԵՐԱՇԽԱԲՈՐԸ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱԶԱՏՈՒԹԻՒՆԸ, ՈՐ ՀԱՅՐԵՆԻՔԸ ԿԸ ՊԱՇՏՊԱՆԵ ԱՆԻՇԽԱՆՈՒԹԵՆԵՆ

ՅԱՅՏԱՐԱՐԵՅ ՆԱԽԱԳԱՀ ԶՕՐ. ԼԱՀՈՒՏ

Նախագահ զօր. Էմիլ Լահուտ երէկ յայտարարեց, որ 2002 տարեշրջանը Լիբանանի համար պատմական դէպքերու եւ միջազգային վստահութեան ամրապնդման տարի էր:

Լիբանանի մէջ գործող դեպքանները, դիւանագէտներն ու միջազգային կազմակերպութիւններու ընդհանուր տնօրէններն ու ներկայացուցիչները ընդունած պահուն, նախագահ Լահուտ մտահոգութիւն յայտնեց շրջանային եւ միջազգային բեմերուն վրայ արձանագրուող իրադարձութիւններուն համար՝ ըսելով, որ վստահութեամբ է խաղաղութիւնը եւ արդարութիւնը, որովհետեւ միջազգային օրէնքն ու օրինակները ենթակայ են ոտնակոխումներու: Ան նաեւ նշեց, որ միջազգային կայունութիւնն ու ապահովութիւնը դրուած են նժարի մէջ՝ նկատի ունենալով, որ կը տիրէ «իրաւունքը զօրաւորին է» տրամաբանութիւնը, արդար իրաւունքի եւ օրինակներու թեան հաշուոյն:



Զօր. լահուտ իր խօսքին պահուն

Հանրապետութեան նախագահը շեշտեց ազգային ընտրանքներու Լիբանանի կառչածութիւնը եւ ըսաւ, որ սահկա երկրին ներքին բեմին կայունութիւնը երաշխաւորեց: «Լիբանանցիները դասեր քաղեցին անցեալէն եւ որոշեցին ապահովել միայն իրենց ուժերուն, միասնականութեան, ինչպէս նաեւ որոշեցին դարձեալ արկածախնդրութեան առարկայ չդարձնել երկրին ապագան եւ իրենց միասնականութիւնը, «մասնաւանդ որ պետութիւնը պիտի չարտօնէ, որ ազգային ձեռքբերումները ոտնակոխուին»:

Նախագահ Լահուտ իր խօսքին մէջ անդրադարձաւ Լիբանանի մէջ ազատութիւններուն պահպանման: «Պետութիւնը յանձնառու է ապահովելու պատասխանատու եւ գիտակից ազատութեան մթնոլորտը, որ հայրենիքը կը պաշտպանէ անխիտանութեան: Անիկա նաեւ բոլոր քաղաքացիներուն իրաւունքներն ու ազատութիւնները կ'երաշխաւորէ, ինչպէս նաեւ կ'ապահովէ անոնց լիիրաւ մասնակցութիւնը հանրային բոլոր մարզերուն», նշեց ան:

Նախագահ Լահուտ ընդգծեց, որ պատասխանատու ազատութիւնը թոյլ չի տար, որ Լիբանան վերածուի եղբայրական երկրի մը վնաս հասցնելու վայրի, մասնաւանդ այնպիսի երկրի մը, որ կանգնեցաւ Լիբանանի կողքին՝ խաղաղութեան եւ կայունութեան ամրապնդման երթին մէջ:

Հանրապետութեան նախագահը բարեկամ եւ եղբայր պետութիւններուն կողմէն անուշաբանութեամբ արդարութեան տրամաբանութեան, փոխանակութեան, լուծելու համար երկիրներու եւ ժողովուրդներու միջեւ տագնապները: Պէտք է շախտախի, գործադրելու համար միջազգային որոշումները՝ Միջին Արեւելքի մէջ ամբողջական, մնալուն եւ արդար խաղաղութիւն հաստատելու նպատակով, եզրփակեց

Շար.՝ էջ 3

### ԹՈՒՐԲԻԱ - ՀԱՅԱՍՏԱՆ ՍԱՀՄԱՆԻ ԲԱՅՈՒՄԸ ԱԶՐՊԵՅՄԱՆԻ «ՀԱՍԱԶԱՅՆՈՒԹԵՆԵՆ» ԵՏԲ

### ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՏԱԳՆԱՊԻՆ ԱՌՆՉՈՒԹԵԱՄԲ ԹՈՒՐԲԻԱ ԱՆՎԵՐԱՊԱՀՕՐԵՆ ԿԸ ԶՕՐԱԿՅԻ ԱԶՐՊԵՅՄԱՆԻՆ

ԿՐԸԷ ԷՐՏՈՂԱՆ

Թուրքիոյ իշխող Բարգաւաճման եւ Արդարութեան Կուսակցութեան ղեկավար Թայիփ Էրտողան 7 Յունուարին պաշտօնական երկօրեայ այցելութեան մը համար ժամանած էր Արաբիան:

Պաքոյի մէջ Էրտողան Արաբիանի նախագահ Հայտար Ալի-էի հետ ունեցաւ երկու ժամուան հանդիպում մը, որմէ ետք կայացած մամլոյ ասուլիսին ընթացքին յայտարարեց, թէ Լեռնային Ղարաբաղի տագնապին առնչութեամբ Թուրքիա անվերապահօրէն կը պօրակցի Արաբիանի: «Կը յուսանք, որ հարցը լուծելի յօգուտ Արաբիանի: Մենք մեր պարպեցանցի երբայրներուն հետ ենք», դիտել տուած է Էրտողան: Էրտողան յայտարարած է, թէ իր երկիրը կը գնահատէ Հայաստանի եւ Արաբիանի նախագահներ Ռոպէրթ Քոչարեանի եւ Հայտար Ալի-էի ղեկավարութեան նախաձեռնած քայլերը եւ կը ցանկայ, որ անոնց արդիւնքը համապատասխանէ Արաբիանի շահերուն:

Պատասխանելով լրագրողներու հարցումներուն՝ Էրտողան նշած է, թէ Թուրքիան նշած է, թէ Թուրքիան կը գնահատէ նաեւ տագնապին լուծման ուղղութեամբ ԵԱՀԿ Մինսքի խմբակին գործունէութիւնը: «Մենք կը կարծենք, որ բոլոր այդ քայլերը կու տան իրենց դրական արդիւնքը», յայտնած է ան:

Իր կարգին, Էրտողանի հետ դոնակա հանդիպումը կատարելով հետաքրքրական եւ կառուցողական Հայտար Ալի-էի յայտնած է, որ ամենէն

կարճ ժամանակամիջոցին Էրտողան դառնայ Թուրքիոյ վարչապետը եւ առ այդ ինք արդէն «եղբայրական երկրին ապագայ վարչապետը հրաւիրած է Արաբիան»: Էրտողան ընդգծած է, թէ «թրքական կողմը մեծ գոհունակութեամբ կը հետեւի Հայտար Ալի-էի իշխանութեան օրով պարպեցանական տնտեսութեան եւ ժողովրդավարութեան կարգաւորման: Այսուհանդերձ թուրք ղեկավարը աւելցուցած է, թէ երկու երկիրներուն միջեւ առկայ յարաբերութիւններուն մակարդակը ասայժմ հետո է բնականօրէն նկատուելի: Ան յատկապէս ընդգծած է, որ պատմական գործընկերութեան անհրաժեշտութիւնը: Էրտողան քննարկած է Շար.՝ էջ 10

### ԻՍՐԱՅԷԼԵԱՆ ԲԱՆԱԿԸ ԽԻՍՏ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ Կ'ՈՐԴԵԳՐԻ ԿԱԶԱՅԻ ԵՒ ԱՅՍՐՅՈՐԴԱՆԱՆԻ ՄԷՋ

Իսրայէլեան ուժեր երեք պաղեստինցիներ սպաննեցին երէկ Կապալի եւ Այսրյորդանանի մէջ, ուր բանակը խստացուցած է միջոցառումներ անցնելու Կիրակի օրուան անձնասպանական գործողութեանէն ետք:



Պատանդներ կը քարկոծեն իսրայէլեացի ճիւղի մը

18 տարեկան պաղեստինցի մը սպաննուեցաւ Թուրքարմի մօտ գտնուող Սայտա գիւղին մէջ, յայտնեցին պաղեստինցի ակաւնատներ: Անոնք աւելցուցին, որ սպաննուած պաղեստինցին քաղաքային մըն էր, որ կանգնած էր տանիքը շէնքի մը, որուն կից բնակարանը կը քանդուէր իսրայէլեան ուժերուն կողմէ: Չհնուորներէն մէկը նկատելով պաղեստինցին, կրակ բացած ու սպաննած է

պայն, ըսին ակաւնատները: Իսրայէլեան բանակի մէկ բանրէրը սակայն ըսաւ, որ պինտուրները փամփուշտներու թիրախ դարձած են, եւ թէ տանիքը կանգնած պաղեստինցին պինտուած էր:

տինցի մը սպաննուեցաւ Կապալի հարաւային շրջանին մէջ, ուր քախումներ տեղի ունեցած էին: Ակաւնատներ յայտնեցին, որ քախումներ տեղի ունեցած էին խան Եունէսի մէջ, Նեւէ Տե- Շար.՝ էջ 10

### ՍԱՏՏԱՄ ՀԻՄՆԵՅՆԻ ՎՐԱՅ ԳՆՇՈՒՄԻ ՅՈՒՅԱՆԻՇՈՎ ՄԸ ՄԻԱՅԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿԵՆ ՈՒԺ ԿԵԴՐՈՆԱՅՆԵԼ ԾՈՅԻ ՄԷՋ

ՄԱԿի գէնքի քննիչները եօթներորդ շաբաթն ըլլալով կը շարունակեն քննութիւնները իրաքի մէջ, մինչ Միացեալ Նահանգներ թափ կու տան Մոցի մէջ զինուորական ներկայութեան: Իսկ բրիտանացի պաշտօնատարներ կը պնդեն, թէ ուժերու կեդրոնացումը չի նշանակեր, թէ քննիչներուն առիթ պիտի չտրուի իրենց աշխատանքը շարունակելու:

Ամերիկեան բանակը նոր կեդրոնատեղի մը հաստատեց Քաթարի մէջ, իսկ Բրիտանիա զօրակոչի ենթարկեց պահեստի 1500 զինուոր: Միացեալ Նահանգներու պաշտպանութեան նախարար Տոնըլտ Ռամսֆելտ զիտել տուաւ, որ այս բոլոր աշխատանքները ենթադրելի պէտք չէ տան, թէ պատերազմը անխուսափելի է: Ռամսֆելտի բրիտանացի պաշտօնակիցը՝ ձէֆ Շուն խորհրդարանին յայտնեց, որ Բրիտանիա ծովու թի 300 զինուոր պիտի ուղարկէ Մոց, ինչպէս նաեւ՝ ծառայութեան պիտի հրաւիրէ պահեստի զինուորներ: Յարգ, Լոնտոն 15 մարտանաւեր եւ սուզանաւ մը առաքած է Մոց:

Փենթագոնի աղբիւրները հաղորդեցին, որ Ռամս-

ֆէլտ Դեկտեմբերին ստորագրած է հրամանագիր մը, որուն հիման վրայ 25 հազար ամերիկացի զինուոր շրջան պիտի ուղղուի: Ներկայիս շրջանին մէջ կը գտնուին մօտաւորապէս 64 հազար ամերիկացի զինուորներ, որոնց 16 հազարը հաստատուած է Քուէյթ - իրաք սահմանին մօտ:

Մինչ այդ, Բրիտանիոյ արտաքին գործոց նախարար ձէք Սթրո կը պնդէ թէ ուժերու կեդրոնացումը Մոցի մէջ պիտի չարգելակէ ՄԱԿի քննիչներուն աշխատանքը: Սթրո աւելցուց, որ այնքան ատեն, որ թիւ 1441 բանաձեւի խախտում չի կատարուիր, քննիչները պիտի շարունակեն քննութիւնները:

Հուն իր կարգին երէկ Անգարայի մէջ յայտարարեց, որ իր երկիրը կ'ուզէ թափ տալ Թուրքիոյ հետ գործակցութեան: Ուաշինկթըն եւ Լոնտոն ՕՊԱՆի դաշնակից Անգարայի գործակցութիւնը կ'ուզեն իրաքի դէմ պատերազմի մը: Թուրքիա խանդավառ չէ սահմանակից իրաքի դէմ պատերազմով մը, որ տնտես-

Շար.՝ էջ 10

### ԱՆԳԱՐԱ ԿԸ ՓՈԽԷ ԻՐ ԲԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ԿԻՊՐՈՍԻ ՏԱԳՆԱՊԻՆ ՆԿԱՏՄԱՄԲ

ԱՆԳԱՐԱ, 8 (ԱՅՓ).- Թուրքիա Զորքաբեր իր յայտնած է, թէ Կիպրոսի վերաբերեալ իր քաղաքականութիւնը պիտի փոխէ՝ համաձայն Կիպրոսի վերամիացման իրենց իրաւունքներին: Միջազգային իրաւունքները, որ ՄԱԿի ընդհանուր քարտուղար Քոֆի Անանի կողմէ մշակուած է, կ'առաջարկէ Կիպրոսը վերամիացընել զուգահեռակալան ոճով զաւանգուեցան մը մէջ՝ իրարու հակառակ, բաղկացուցիչ 2 պետութիւններով, կեդրոնական կա-

ռավարութեամբ մը, որ մէկ ձայնով կը խօսի ԵՄ-ի ուժերուն եւ միջազգային այլ մարմիններու մէջ: Թուրքիոյ արտաքին գործոց նախարարութեան բանբեր Եուսուֆ Պուլուչ Անգարայի մէջ մամլոյ ասուլիսի մը ընթացքին յայտնած է, թէ Անանի ծրագիրը «նոր եւ կարեւոր տուեալ մը կ'աւելցնէ՝ Կիպրոսի հարցը խաղաղօրէն լուծելու ճիգերուն վրայ»:

«Հետեւաբար քաղաքականութեան յարմար-

րեցման կարիք կայ: Այդ յարմարեցումները ընթացքի մէջ են», ըսած է ան՝ աւելցնելով, որ Թուրքիա դիւանագէտներու խմբակ մը զրկուած է Հիւսիսային Կիպրոսի Թուրքիայի պաշտօնատարներու հետ քննարկելու համար: Զորքաբեր իր լոյս տեսած հարցադրոյցի մը մէջ, արտաքին գործոց նախարար Եաշար Եաբըլ յայտնած է, թէ քաղաքացիականութեան վերատեսու-

Շար.՝ էջ 10

### Տ. ՆԱԳՂԱԼԵԱՆԻ ՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԾՈՒՐՋ ՀԵՏԱՔՆՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԻՆ

Իրաւապահ մարմիններ կը շարունակեն Հայաստանի Հանրային Պատկերասփիւռի եւ Զայնափիւռի Ընկերութեան խորհուրդի նախագահ Տիգրան Նաղդաբեանի սպանութեան շուրջ քննութիւնները: Վերջին տուեալներուն համաձայն, ապահովական մարմիններ կը փնտռեն Նաղդաբեանի սպանութեան ատորձանակը, որ չէ յայտնաբերուած ոճիքի վայրին մէջ: Կ'ենթադրուի, որ Նաղդաբեան սպանուած է առանց ձայնարկելի արժանակով մը:

Ատորձանակին յայտնաբերման նպատակով խուզարկուած են շուրջ 25 բնակարաններ: Եղած են նաեւ ձեռքարկութիւններ, եւ երկու անձեր մեղադրուած են ապօրինի զէնք ձեռք բերելու եւ պահելու յանցանքով:

Նախաքննութեան ծիրէն ներս նկատի առնուած վարկածներուն թիւը աւելցած է, եւ քննութիւնը այժմ կ'ընթանայ 6 վարկածներու եւ բազմաթիւ ենթավարկածներու ուղղութեամբ:

Միւս կողմէ, Եւրոպական Խորհուրդի ընդհանուր քարտուղար Վալթէր Ծուիլըր դատապարտեց Տիգրան Նաղդաբեանի սպանութիւնը, գործակցութեան զուժութիւն լրատուամիջոցներու ազատութեան դէմ: Ան կողմ ուղղեց Հայաստանի իշխանութիւններուն՝ մանրամասն քննութիւն բանալ եւ հանրութիւնը տեղեակ պահել անոր արդիւնքներէն:

Շար.՝ էջ 3

## ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

# ԱԶԳԱԿ

SARKIS & HAGOP LOUSSARIAN

We wish you a warm Christmas and a healthy New Year

«ԱԶԳԱԿ» 2003Ի ՆՈՐ ՏԱՐՈՒԱՆ ԲԱՅԱՌԻԿԸ







# ՆԱԽԱԳԱՀ ՌՈՊԵՐԹ ՔՈՉԱՐԵԱՆԻ ԱՄԱՆՈՐԵԱՅ ՇՆՈՐՀԱՒՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՉԸ

Սիրելի՛ հայրենակիցներ, Մենք հրաժեշտ ենք տալիս 2002 թուականին: Անցնող տարին ցոյց տուեց, որ մեր երկիրը մտել է որակական նոր փուլ: Մենք հրաժարուեցինք ապրել մոռալ կանխատեսումներով: Մենք ընտրեցինք ամենօրեայ լարուած աշխատանքի նախադրեք, որը միակն է երկիրը գարգացնելու համար:

Այս տարուան տնտեսական անը աննախադեպ էր անկախութիւնից ի վեր: Սա խօսում է բոլորիս ջանքերի յաջողութեան մասին: Սակայն տնտեսութեան իրական ցուցանիշը մարդու բարեկեցութիւնն է:

Ես չեմ մոռանում, որ դեռ կան երեխաներ, ովքեր ապրում ու սովորում են ոչ բարեւոք պայմաններում: Կան ծնողներ, ովքեր դժուարութեամբ են հայրապրում իրենց ընտանիքների հացը: Կան մեծահասակներ, որոնց կեանքի պայմանները դեռեւս հեռու են բարար լինելուց: Հաւատացնում եմ ձեզ, որ կարճ ժամանակ անց ձեր հոգեբը էապես կը թեթեւանան:

Յատուկ գնահատանքի են արժանի մեր կանայք՝ մեզ նեցուկ դժուարին պահին եւ միշտ հմայիչ ու կանացի: Ձեր լաւատեսութեամբ եւ համբերատարութեամբ է ամուր ընտանիքը, ուրեմն եւ՝ երկիրը:

Այսօր առաջին անգամ Նոր Տարին նոր հարկի տակ են դիմաւորում երկրաշարժից տուժած հազարաւոր ընտանիքներ: Ես շնորհաւորում եմ բոլորին: Հաւատացեք, որ Հայաստանի հիւսիսում մենք ունենալու ենք գարգացման գոտի:

Անցնող տարում մենք շարունակեցինք մեր ջանքերը ուղղուած Լեռնային Ղարաբաղի խնդրի կարգաւորմանը: Այս հարցում մեր տեսակետները միջազգային հանրութեան կողմից երբեք այնքան լսելի եւ ընկալելի չեն եղել, որքան այսօր:

Եւս մեկ տարով մեծացան ու ամրացան Հայաստանի գիւնուած ուժերը: Մենք, աւելի քան որեւէ այլ ժողովուրդ, գիտենք խաղաղութեան արժեքը: Շնորհաւորենք եւ բարի ծառայութիւն մտղքեր մեր երկրի ու խաղաղութեան պաշտպաններին:

Նոր Տարում նոր փայլով կը վերաբացուեն մեր մշակութային օճակները: Դրան մեր ժողովուրդը եւ մշակութի գործիչները երկար են սպասել: Նոր շուրջով մեզ կը ներկայանայ մայրաքաղաք Երեւանը:

Եկող տարի տեղի են ունենալու նախագահական եւ խորհրդարանական ընտրութիւններ: Սրանք մեծ իրադարձութիւններ են մեր երկրի կեանքում: Լիալոյս եմ, որ ընկերութիւնները կ'անցնեն այնպէս, ինչպէս վայել է կազմակերպուած եւ քաղաքակիրթ ժողովուրդին: Ոչ բոլորն են դա ցանկանում, եւ մենք պարտաւոր ենք զգօս լինել:

Սիրելի՛ հայրենակիցներ, Հայաստանի, Արցախի եւ Սփիւռքի բոլոր ու եղբայրներ, այս պահին հեռուստատեսութեան շնորհիւ աշխարհի տասնեակ երկրների հայեր Նոր Տարին դիմաւորում են միասին: Հայաստանեան ժամանակով, հայկական երաժշտութեամբ եւ, ի հարկէ, կենցաղներով: Համազգային համայնքում մի նոր աստիճան է սա:

Սրտանց շնորհաւորում են ձեզ Նոր Տարուան առիթով: Թող 2003 թուականը առողջութիւն, համբերաշխուքիւն եւ յաջողութիւն բերի ամեն մի տուն: Շնորհաւոր Ամանոր:

**«ԱԶԳԱԿ»Ի ՄԷՋ ԾԱՆՈՒՅՈՒՄԻ ՀԱՄԱՐ**

Բոլոր անոնք, որոնք կը փափաքին «Ազգակ»ի մէջ որեւէ ծանուցում հրատարակել, պէտք է բնագիրը խմբագրատուն՝ ծանուցումներու բաժանմունք հասցեն հրատարակման թուականն առնուազն օր մը առաջ, ՄԻՆՉԵԻ ԵՐԵՎԱՆԻ ՃԱՄԱՐ 5:00:

ՄԱՀԱՋՂՆԵՐԸ բացառութիւն են: Մահազղ կ'ընդունուի մինչեւ ուշ գիշեր, այնքան ատեն որ զայն հրատարակելու հնարաւորութիւն կայ:

**www.lemagan.com**

# Գ. ՆԱՐԵԿԱՑԻ ՏԱՐՈՒՄՆ ԿԵՏ ՀԱՐՅՈՒՄՆԵՐ ԵՒ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ ՀԱՅ ՍՈՒՐԲԵՐԸ ՀՐԱՇՔՆԵՐ ԿԸ ԳՈՐԾԵՆ

Կ'ապրինք Սփիւռքի մէջ. սփիւռքահայ ենք: Մեր պարզազային լիրանանահայ ենք: Կ'ապրինք այլ ժողովուրդի մը հետ, որ ունի իրեն յատուկ ընկերային անհղութիւններ: Մենք ալ, իբրեւ հայ, ունինք մեր անհղութիւնները, կենսաձեւը, գործերած ենք մեզ հետ մեր հայրենական բնաշխարհը: Հասկնալի է նոյն ատեն, թէ ապրելով տարբեր ժողովուրդներու հետ՝ հետզհետէ կ'իւրացնենք, կ'որոգեզրենք նաեւ անոնց սովորութիւնները, ապրելաձեւերը, եւ այլն: Կենսաբի բնական հոլովոյթն է այս:

Իւրաքանչիւր ազգ ունի իր հաւատալիքները՝ հոգեմտաւոր անդաստաններն մէջ: Այս հաւատալիքները միայն կրօնական չեն, այլ՝ սնտոյի պաշտութիւն, աւելորդ դապաշտութիւն: Ինչ կը վերաբերի եկեղեցիին հետ կապուած քրիստոնէական հաւատքին, սուրբերու նահատակութեան, սրբադասման ծէսերուն, իւրաքանչիւր քրիստոնէայ եկեղեցի ունի իր հաւատալիքը կամ մերժումը, հանդէպ սուրբերու բարեխօսութեան, անոնց գորութեան, հաւատացեալին հոգեկան խառնուածքին տրամադրութեան: Կ'ըսեն նաեւ, թէ կրօնը ինչի հարց է, հաւատքը՝ ներաշխարհային տրամադրութիւն:

Մեկնելով սուրբերու հանդէպ ժողովուրդ-հաւատացեալին ջերմեանը՝ համոզուած ենք՝ կարելի է վէճի նիւթ դարձնել նման հարցեր: Օրինակի համար, Լիբանանի մարտի եկեղեցին 20րդ դարու երկրորդ կիսուն սրբադասեց երեք լիբանանցի սուրբեր: 1950ական թուականներուն սուրբ հռչակուեցաւ Շարպէլ անունով եկեղեցականը: Իր անունով եկեղեցիներ, վանքեր կառուցուեցան, հրաշքներ գործուեցան: Լիբանանի հիւսիսային լեռնային շրջանին մէջ գտնուող Աննայ վանքը դարձած է ուխտատեղի:

1990ական թուականներու սկիզբը սուրբ հռչակուեցաւ Հարութին անունով եկեղեցականը: 1990ական թուականներուն վերջերուն հերթը եկած էր Պիեֆֆայի շրջանին Համայնքի գիւղի ծնունդ մայրապետ Ռաֆֆայի, որ ունի իր սրբալարը՝ դարձեալ հիւսիսային Լիբանանի լեռնային շրջանին, գրեթէ նոյն վայրին մէջ: Սուրբ Մարուսին ետք Մար Շարպէլ, Մար Հարութին եւ Սրբուհի Ռաֆֆա զէպի իրենց կը հրաւիրեն հաւատացեալներու, որոնք ուխտեր կը կատարեն՝ խնդրելով անոնց բարեխօսութիւնը: Սուրբերուն կատարած հրաշքներու մասին

հրապարակային հաղորդումներ կը տրուին: Տարի մը առաջ սուրբ հռչակուեցաւ Հայոց Եղեռնի նահատակ եպիսկոպոս Իգնատիոս Մալքեային անհղութիւնները: Սրբազան պապը սրբադասեց զինք, ու կը սպասուէր անոր կատարելիք հրաշքներուն: Հայ հաւատացեալը կը հարցնէ յաճախ. Հայաստանի սուրբե՞րը հաւատալի են: Անոնք հրաշքներ կը կատարեն: Անմիջապէս ըսենք, թէ 70 տարի հայ մարդը մեր հայրենիքին մէջ զրկուեցաւ եկեղեցու պաշտամունքէն, հեզանքի ենթարկուեցան հաւատքի մարդիկը, ու այս միջոցառումն մէջ մեր սուրբերը մոռցուեցան: Ահաւասիկ ժամանակը եկած է. այս տարի ազգովին պիտի փառաւորենք Նարեկացին, որուն գրած «Մատեան Ողբերգութեան» կամ «Նարեկ» աղօթմատեանին ստեղծման-գրառման 1000ամեակն է (1003-2003): Ուրեմն խնդրենք սուրբին, որ ողորմի մեզի եւ հրաշքներ գործէ իրեն հաւատացողներուն հոգիներուն մէջ: Ամբողջ ազգին գաւազները կը հրաւիրուին ջերմեան, դուրսեմբ հետեւելու սուրբին ընծայուած աղօթքներուն, եկեղեցական թէ աշխարհական նախաձեռնութիւններուն: \*\*\*

Այս առիթով կ'ուզենք յիշեցնել, թէ անցնող աշնան, 2002 տարուան Սեպտեմբեր ամիսէն Նոյեմբերի աւարտ, Փրանսացի Սրբուհի Թերեզայի ամիսը բերուեցաւ Լիբանան, ուր մնաց 77 օր, «այցելեց» Լիբանանի բոլոր շրջաններու կաթողիկէ եւ մարտի եկեղեցիները: Բազմահազար հաւատացեալներ հետեւեցան անոր ի պատիւ կազմակերպուած հանդիսաւոր

արարողութիւններուն, թափօրներուն: Յիշենք նաեւ իտալացի Սրբուհի Ռիթան, որուն գորութեան եւ «Անկարելի դատեր պաշտպանողի» բարեխօսութեան կը հաւատան շատեր: Նոյնիսկ հայկական ուխտատեղի մըն ալ կայ Լիբանանի մէջ, Միխիթարեան միաբանութեան հովանաւորութեամբ (Թաուտա): \*\*\*

Ո՛ւր են մեր սուրբերը. իբրեւ հայ հաւատացեալ՝ կը հաւատանք անոնց ներգործօն բարեխօսութեան, անոնց հոգեշունչ գորութեան. կատարելու հաւատան է: Մենք հեռու ենք մեր հայրենիքէն՝ Մուշէն, Կարիւնէն, Աղթամարէն: Մշոյ Սուրբան Սուրբ Կարապետները իրենց ամառութեան մէջ դեռ կը հսկեն հայ ժողովուրդին գոյատեւումը, վերականգնումը՝ հոլովոյթին. կարեւորը զայն չմոռնալն է, հոգիներուն մէջ պահպանումն է մեր սուրբերուն՝ Նարեկացիին մինչեւ Շնորհալի, Սուրբ Սարգիսէն մինչեւ Սեբաստիոն Քառասուն Մանկունքը, Սուրբ Յակոբն ու Սուրբ Գէորգը, Հռիփսիմեանց կուսանաց հոլով: Հայոց եկեղեցին յիշատակի յատուկ օրեր ունի իւրաքանչիւրին նուիրուած: Մեզի կը մնայ բանալ մեր աչքերն ու ակնշնները, պատուել գանոնք ու ուղիտաբար հարցումներ ուղղել, թէ հայ սուրբեր կ'ան... Տարագիր ժողովուրդ ենք: մեր սուրբերը չեն տարադրուած, անոնք կը մնան Հայ հողին վրայ, կը պարարտացնեն հայուն հողը՝ իրենց ոգեկան գորութեամբ, որպէսզի յաւերժանան հայոց հայրենիքը, ազգը: Կարեւորը հաւատքն է:

ՇԱՀԱՆԳՈՒՄՏ

## ՀԱՅԱՍՏԱՆ ԱՌԵՒՏՈՒՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ ԼԻՒՐԱՒ ԱՆԴԱՄ՝ ՅՈՒՆՈՒԱՐԻ ՎԵՐՋԱՒՈՐՈՒԹԵԱՆ

Հայաստանի նախագահ Ռոպէրթ Քոչարեան Առեւտուրի Համաշխարհային կազմակերպութեան գլխաւոր քարտուղարութեան պաշտօնական գիր յղած է կազմակերպութեան Հայաստանի անդամակցութեան փաստաթուղթերուն վաւերացման մասին: Հայաստանի առեւտուրի եւ տնտեսական զարգացման փոխ նախարար եւ Առեւտուրի Համաշխարհային կազմակերպութեան անդամակցութեան բանակցային խումբի ղեկավար Տիգրան Դաւթեան այս առնչութեամբ նշեց, որ պաշտօնական ծանուցումն էր, 30 օրուան պայմանաժամի ընթացքին Հայաստան պիտի դառնայ Առեւտուրի Համաշխարհային կազմակերպութեան լիիրաւ անդամ: Հետ Տ. Դաւթեանի, 10 Դեկտեմբերին Առեւտուրի Համաշխարհային կազմակերպութեան անդամակցութեան փաստաթուղթերուն ստորագրութեան օրէն Հայաստան վեց ամիս ժամանակ ունէր կազմակերպութեան հիմնադրութեան 19 համաձայնագիրներու (Մարտ, 1994), եւ անոնց զուգահեռ փաստաթուղթերու վաւերացման համար, ինչպէս նաեւ՝ այդ մասին Առեւտուրի Համաշխարհային կազմակերպութեան քարտուղարութիւնը պաշտօնապէս տեղեկ պահեւ համար:

### ԲԱՄԲԱՍԱՆՔ, ԹԷ ԲԱՆՆ ԱՍԱՆԿ

Դժգոհութիւնները հետզհետէ կ'աւելնան հոս ու հոն, բազմաթիւ թաղերու մէջ բացուած համակարգիչի «խանութ»ներուն դէմ, ուր անհափառ մանուկներ, պատանիներ, պարմաններ երկար ժամեր կը նստին համակարգիչին դիմաց, ոչ միայն հետեւելով անճակահանատարքութիւններու, այլեւ կողմակի դիտելով բոլոր նստած միւսներուն ճաշակով բացուած կայքերուն: Հոս անոնք կը տեսնեն զգայացուցիկ նկարներ, տեսարաններ, գայթակղեցնող վիճակներ:

Մեկ-երկու տարուան այս փորձառութեան ետք ծնողները հարց կու տան. համակարգիչը գարգացո՞ւց, թէ բացուց մեր գաւակներուն ուղեղները:

Դասք մը ոգելից ըմպելիք հետ համացանցին հետ ժամեր սպառող սերունդը կը մտահոգէ ընկերութիւնը: «Ամէն ինչ իր չափին մէջ գեղեցիկ է», կ'ըսեն իմաստունները: Իսկ մենք ե՞րբ պիտի ըմբռնենք «չափաւորութիւն» բառին իմաստը...

## ՂԱՐԱԲԱՂԵԱՆ ԹՂԹԱՏՐԱՐԸ ՊԵՏԻ ՔՆՆԱՐԿՈՒԻ ԷՐՏՈՂԱՆԻ ՊԱՔՈՒ ԱՅՅԵԼՈՒԹԵԱՆ ԸՆԹԱՑՔԻՆ

Օրերս Ազգային ժողովի Թուրքիոյ Արդարութիւն եւ Բարգաւաճում կուսակցութեան ղեկավար Ռեճէփ Թայիպի խորոզան: Հետ «Ազատութիւն» ձայնասփիւռի կայանին, Ազգային նախագահի արտաքին հարցերու խորհրդական Նովրուզ Մամեթով ըսած է, թէ Պաքուի մէջ քննարկուելիք նիւթերը պիտի ըլլան Շահ-տենիդի կազատարի ծրագրին իրագործման առնչուող խնդիրներուն լուծման կերպերը: Նշենք, որ կազատարին նպատակը պիտի ըլլայ Կասպից ծովուն կազմութեան հասցնելը: Նշենք նաեւ, որ այս ծրագիրը ներկայիս չի գործադրուիր, որովհետեւ «Պրիթիլ Փեթրոլիում» ընկերութիւնը մտաւախութիւն ունի, որ Թուրքիա կրնայ ի վիճակի չըլլալ գնելու այդ կազմը՝ նկատի ունենալով երկրին դիմագրաւած տնտեսական դժուարութիւնները:

Այցելութեան ընթացքին պիտի քննարկուի նաեւ զարգացման տագնապը: Հետ Մամեթովի, այն հանգամանքը, որ էրտողան իր շրջան այցելութիւնը կը սկսի Ազգային նախագահի, ցոյց կու տայ, որ ան յատուկ կարեւորութիւն կ'ընծայէ Ազգային նախագահի հետ Թուրքիոյ յարաբերութիւններուն:

## ՀԱՅԱՍՏԱՆ-ԻՐԱՆ ՄԻՋԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՅՈՒԹԵԱՆ ԽՈՐԱՅՈՒՄ

Հայաստանի Ազգային ժողովի նախագահ Արմէն Խաչատրեան տեսակցութիւն մը ունեցաւ Իրանի խորհրդարանի Իրան - Հայաստան բարեկամութեան խումբի անդամներուն հետ: Հանդիպումին ընթացքին, որուն կը մասնակցին նաեւ Հայաստանի Ազգային ժողովի Հայաստան - Իրան պատգամաւորական խումբի նախագահ Միասնիկ Մալխասեան եւ Հայաստանի մէջ Իրանի դեսպան Սոհաձէտ Տարսան Քոչէյնի, Ա. Խաչատրեան նշեց, որ Հայաստան-Իրան միջխորհրդարանական յարաբերութիւնները կարիք ունին արդիւնաւէտ զարգացման, եւ իրենց մակարակցով կը գիշերն միջպետական յարաբերութիւններու մակարակցին:

Իր կարգին, Իրանի խորհրդարանի հայ երեսփոխան Լեւոն Դաւթեան նշեց, որ Հայաստանի Ազգային ժողովի մնայուն յանձնախումբերու անդամներուն հետ տեղի ունեցած տեսակցութիւններէն ետք ի յայտ եկած է, թէ որքան մեծ աշխատանք կայ տանելի եւ որքան մեծ է համագործակցութեան ներուժը:

Ենչտեղով միջպետական յարաբերութիւններուն մէջ երկու խորհրդարաններուն դերը՝ վ. Դաւթեան կարեւոր նկատեց նաեւ միջազգային կառուցներուն մէջ երկու երկրներուն համագործակցութիւնը, եւ այդ շրջագիծին մէջ Հայաստանի աշակցութիւնը իրանին՝ Սեւեռուեան Տնտեսական Համագործակցութեան կազմակերպութեան անդամակցութեան գծով: Հայաստանի Ազգային ժողովի նախագահ Արմէն Խաչատրեան անդրադառնալով շրջանային յարաբերութիւններուն՝ նշեց, որ Հայաստանի նախագահ Ռոպէրթ Քոչարեանի Իրան այցելութեանն էր, կարելիութիւններ ստեղծուեցան քաղաքական բարձր մակարակի յարաբերութիւնները ամբողջացնելու համար: Կողմերը ընդգծեցին Իրանի - Յունաստան - Հայաստան - Իրան համագործակցութեան խորացման անհրաժեշտութիւնը:

# ԳՈՐԾԱԾԵՑԷՔ FUEL CARD ՏՆՏԵՍԱԿԱՆ ԾՐԱԳԻՐՆԵՐՈՒ ՅԱԶՈՂՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Յաւելեալ մանրամասնութեանց համար հեռաձայնել՝ 01-242556 թիւին:

# ԸՆԿԵՐԱՅԻՆ ԻՈՒՑՆԵՐ

Լիբանանեան կեանքի երեւոյթներ

## ԼԻԲԱՆԱՆՅԻՔԻ ԻՆՉՊԵՍ ԱՆՅՈՒՑԻՆ ՆՈՐ ՏԱՐԻՆ ԵՒ ԱՐԳԵՕՔ ԱՆԻԿԱ ԻՐԵՆ ՀԵՏ ԲԵՐԱԻ ... ՆՈՐ ՀՈԳԵՐ ՈՒ ՀԱՐՑԵՐ

Նոր Տարին հասած է՝ հին տարիէն իրեն հետ ժառանգելով հազարաւոր հոգեր եւ տաղանդներ, ինչպէս նաեւ՝ բերելով նոր յոյսեր ու տնտեսական եւ ընկերային աւելի լաւ պայմաններ ապահովելու ձգտումներ:

Տօնական օրերը որոշ մարդոց համար անցան բաւական խանդավառ եւ ճոխ մթնոլորտի մէջ, իսկ ուրիշներու համար անոնք եղան թախծոտ:

Կաղանդի շքեղ ծառեր, յուսաւորուած փողոցներ, տօնական մթնոլորտին յարմարող եւ հիանալի կերպով զարդարուած հրապարակներ, պատշգամներ, շէնքեր, հաստատութիւններ, Նոր



Տարուան առիթով «աննախնայ» առիթներու եւ առաջնորդներու մասին խօսող ծանուցումներ եւ այլ շարժումներ պատկերներու մէջ լիբանանցի պահ մը կը կարծէ, թէ ինք որսախի մէջ կ'ապրի:

Հակառակ տարուան ընթացքին արձանագրուած բաւական ծանր պայմաններուն եւ հարցերուն, տօնական օրերուն մարդիկ պահ մը կանգ կ'առնեն եւ կ'ուզեն հաւատալ, թէ տարուան փոփոխութեամբ կարելի է այլ փոփոխութիւններ եւս նկատել երկրին եւ յատկապէս իրենց իրավիճակին մէջ: Յնձացող աշխարհին հետ լիբանանցիները կը փափաքին իրենց տուններուն եւ հողիներուն մէջ նաեւ ներմուծել տօնական ուրախութիւնը, Կաղանդ Պապուկին բարձր խնդուքը եւ այլն:

Ոմանց մօտ Նոր Տարին իսկական տօն մըն է՝ բառին ամբողջական իմաստով: Անիկա կ'ենթադրէ Կաղանդի հոյակապ ծառ, տօնական մթնոլորտ՝ տան իւրաքանչիւր սենեակին եւ ճիւղերու խոհանոցին մէջ, համադրած ճաշեր, ազգականներով եւ բարեկամներով համախմբուած սեղաններ, խնձոքներ, եւ այլն:

Ուրիշներ կը նախընտրեն իրենց տօնը անցընել անարաններու մէջ՝ ձերբագատելով ճաշ պատրաստելու, հիւր հրաւիրելու եւ տունը «տախտակաւ» ընելու «տաղտուկէն»:

Այլ անձերու ընկերային կացութիւնը «կը պարտադրէ» տուններուն մէջ մնալ: Անոնց համար, Նոր Տարուան գիշերը պարզ երեկոյ մըն է, սովորականէն քիչ մը տարբեր ճաշերով լեցուն ընտանեկան հաւաք մը՝ հեռատեսիլին դիմաց:

Իրենց սոսկալից կամ ճամբորդութիւններու կը ձեռնարկեն, միջակ եւ անկէ աւելի վար դասակարգի պատկանող մարդիկ կը զգան, թէ որքան ահաւոր բացուածքներ մը կայ նոյն ժամանակաշրջանին, նոյն երկրին մէջ ապրող մարդոց միջեւ: Այն ատեն թերեւս անոնք կը գիտակցին, թէ իրենք որքան զրկեալ վիճակի մէջ կ'ապրին, մինչ ուրիշներ կը վայելեն ու կը մտնեն իրենց ուրախութեան եւ հաճոյքին համար:

Կատարուած ոչ պաշտօնական վիճակագրութիւնները ցոյց տուած են, թէ չոր հացի համար պայքարող լիբանանցիներէն շատեր մէկ գիշերուան մէջ հսկայական գումարներ մտնած են իրենց հաճոյքին եւ «Նոր Տարի է, պէտք է ուրախանալ» տրամադրութեան համար: Փաստօրէն Լիբանանի մէջ չկար ճաշարան մը կամ գիշերային երիտասարդական գրաստան մը, որ անգործ էր այդ օրը: Ետուզեալ եւ իրարանցումը տիրապետած էին կեդրոնական Պէյրութէն մինչեւ մայրաքաղաքէն դուրս գտնուող շրջաններ, հեռաւոր գիւղեր: Շատեր, ի գին դիզուած պարտքերու, ուզած են իրենց Կաղանդը անցընել տուններէն դուրս՝ փառաւոր ճաշարաններու մէջ: Ըստ կարգ մը տուեալներու, այս խումբին պատկանողները կը կազմեն լիբանանցի ընտանիքներուն 40 - 45 առ հարիւրը, իսկ մնացեալը կը նախընտրէ տունը մնալ եւ հաւաքուի ազգականներու եւ բարեկամներու հետ: Նոր Տարուան գիշերը երիտասարդներուն մեծամասնութիւնը մինչեւ կէս գիշեր իր տունը կը մնայ եւ անկէ ետք անոնք իրենց ընկերներով դուրս կ'ելլեն գիշերային գրաստաններու մէջ անցընելու եւ առաւօտուն տուն վերադառնալու համար:

Տօնը եւ Ս. Մնուղը այսօր որոշ չափով սկսած են կորսնցնել իրենց աւանդական, կրօնական իմաստը եւ սկսած են վերածուիլ միայն խրախճանքի եւ ճաշ-կերոյթ - պարահանդէսներ կազմակերպելու առիթներու: Տօնը ձեւով մը պարզուած են իրենց խորհուրդէն եւ վերածուած են ուսելու եւ գինովնալու առիթի: Ս. Մնուղը որոշ չափով դադարած է Յիսուսին ծնունդը խորհրդանշող տօն ըլլալ եւ վերածուած է կերուխումի առիթ տուող տօնախմբութեան:

Սակայն բոլորին պարագային ալ իրողութիւնը կը մնայ նոյնը, ինչ ալ ըլլան տօնախմբութիւնները, ինչ ալ ըլլայ սեղաններուն վրայ, որոնք ալ ըլլան անոր շուրջ համախմբուողները, ժամը 12:00ին պիտի հնչէ գանգր եւ պիտի աւետէ Նոր Տարուան գալուտը:

Անխուսափելի իրողութիւն է այն, թէ ոչ ոք կրնայ ամբողջութեամբ ազատիլ հին տարիէն եւ սկսիլ Նոր Տարի մը իր իսկական իմաստով: Լիբանանցիներու պարագային եւս Նոր Տարուան հետ անպայման չանցան հին տարուան հոգերն ու հարցերը: Հակառակ Նոր Տարի ըլլալու իրողութեան, տակաւին երկրին մէջ կան հազարաւոր մանուկներ, որոնք անօթի փորով անկողին կը մտնեն եւ յաջորդ օրը կ'արթնան կասկածելով, թէ պիտի կարենան նախաճաշ գտնել: Հակառակ Նոր Տարի ըլլալուն, տակաւին կան հազարաւոր մարդիկ, որոնք գիշերը ցերեկին կը միախառնեն վերջաւորութեան չոր հացով մը տուն վերադառնալու համար: Հակառակ Նոր Տարի ըլլալուն, տակաւին երկրին տնտեսական եւ ընկերային վիճակը վատ կը մնայ եւ, կառավարութիւնը հարկ եղած ճիգը չի թափեր վիճակը բարելաւելու: Հակառակ Նոր Տարի ըլլալուն, տակաւին պետութիւնը կը մտածէ նոր տուրքեր հաստատել եւ իր պարտքը թեթեւցնել՝ ժողովուրդին ապրուստին տրամադրուած գումարներէն առնելով:

«Շնորհաւոր Նոր Տարի» եւ «Լաւ տարիներ» նախադասութիւնները այս օրերուն հնչող ամէնէն տարածուած նախադասութիւններէն են: Հակառակ առկա բոլոր հարցերուն, լիբանանցիին կը շարունակէ յուսալ «լաւ տարիներ»ու գալուտին:

Մթանչիլի երեւոյթ է լաւատես ըլլալը, սակայն այս մէկը պէտք է մղէ կուրուսթեան եւ խարուսիկ մթնոլորտի: Բազմաթիւ լուրջ հարցեր փոխանցուած են Նոր Տարուան եւ անոնց բարեւոյ լուծման պարագային միայն տարին պիտի ըլլայ աւելի լաւ:

Պատրաստեց՝ ՆՈՐԱ ԲԱՐՍԵՂԵԱՆ

# ՍՆՆԴԱԳԻՏԱԿԱՆ


Առողջ Մնայու Գաղտնիքները

## ՈՒՐԱԽ ԱՌԻԹՆԵՐՈՒ ԼԱԻԱԳՈՅՆ ՆՈՒԷՐԸ՝ ՏՈՒՐՄԸ Ա.

Քաջառոյի ծառը կ'աճէր Ամազոնի անտառներուն մէջ: Հետագային քաջառոյի մշակուածը զարգացաւ ազիթէք ցեղախումբին կողմէ, որոնք քաջառոյի հունտերը կը գործածէին իրենց կրօնական ծիսակատարութիւններուն ընթացքին: Կ'ըսուի, թէ ազիթէք հանրածանօթ կայսրը՝ Մոնթեզումա, ամէն գիշեր քաջառոյով պատրաստուած խմիչք կը խմէր:

Քրիստափոր Բոլոմպոս առաջին եւրոպացին էր, որ յայտնաբերեց չոր

վերաբերի համին, անիկա պէտք է քաղցր ու «ներդաշնակ» ըլլայ՝ հաւասարապէս թէ՛ լեղուլթեան եւ թէ՛ կակոզուլթեան զգացողութիւնը տալով: Տուրմին պատառը պէտք է հալի մեր բերնին մէջ: Վերջապէս, խօսելով տուրմին տեսքին մասին՝ կ'ըսենք, որ անիկա պէտք է ըլլայ շողացող եւ ողորկ: Անհարթութիւններ պէտք չէ տեսնուին անոր վրայ: Կարգ մը պարագաներու տուրմին մակերեսին վրայ կը տեսնենք թեթեւ ճերմակութիւն մը: Ջերմ



ըլլան, երբ կուրանաճաղ կ'ըլլին այցելեց: Քրոմպոս երբ «Նոր Աշխարհ»-էն 1502ին վերադարձաւ Եւրոպա, սկսաւ ժողովուրդին ներկայացընել քաջառոյ կամ շոքոլան: Կաթով եւ շաքարով պատրաստուած քաջառոյի խմիչքը մեծ ընդունելութիւն գտաւ սպանական արքունիքին մէջ: Քաջառոյի խմիչքը դարձաւ ազնուականներուն խմիչքը: Հետագային քաջառոյի խմիչքը սկսաւ տարածուիլ այլ երկրներ, ինչպէս՝ Իտալիա, Աւստրիա եւ Ֆրանսա:

Ճարտարաւորուեսական գեղանի վրայ, բրդեւոր քաղցր ձողովք Ֆրանսա առաջինն էր, որ շուկայ հանց շերտուած տուրմերը, որոնք կը պատրաստուէին ճնշող ջրաքարը մեքենաներով: Ճարտարապետական յեղափոխութեան ընթացքին տուրմի արտադրութիւնը մեծ թափ ստացաւ շնորհիւ կարգ մը ռահպիւրաներու, որոնց անունները մարդոց յիշողութեան մէջ մինչեւ օրս դրոշմուած են:

մուլթեան փոփոխութեան պատճառով քաջառոյին իւրը տուրմին մակերեսը կը բարձրանայ եւ կը գոկառնենք տուրմը, պէտք է զգանք անոր թարմութիւնը ու կակոզուլթիւնը: Տուրմը պէտք է փխրուն դառնայ մեր ակուաններուն տակ: Ինչ կը

ՔԱՐԱ ԵԱՐՏԵԱՆ

**CITIZEN**

To you, it's the moon. To you, it's a lamp.

To an Eco-Drive, it's a battery. As is any light, be it sunlight, firelight, electric light.

**Eco-Drive**

AGENT EXCLUSIF ET DISTRIBUTEUR: H.G. YESSAYAN & CO. - TEL. 01 240960-1 P.O. BOX: 80555 BEIRUT LEBANON - E-MAIL: yes@dm.net.lb

